Բավրա

Վարչական պատասխանատու՝ Սումբուլյան Պավլիկ

Հեռ 093-80-39-46

Մակերես՝ 16.5կմ^2

Բնակչություն՝ 596

bavra.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից 14-15կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 46կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Թիդոյի խարաբա, Թիթոյ խարաբա, Խարաբա, Տիտոյ խարաբա անվանումները: Տեղադրված է Գյումրի-Ախալքալաք ավտոմայրուղու վրա:
Գյուղը գտնվում է Աշոցքի բարձրադիր սարահարթում՝ ծովի մակարդակից 2150մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով:Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:
1958 թ-ին երկրաշարժի հետևանքով Բավրան ավերվել է և նորից կառուցվել է նախկին գյուղից մի փոքր հեռու: Գյուղից հարավ-արևմուտք կան մի այլ բնակավայրի և բերդի ավերակներ, որտեղ կան հին արաբական տապանագրերով գերեզմաններ:
Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1860թ տեղափոխվել են Արդահանի շրջանից: 1897 թ-ին գյուղն ունեցել է 262, 1926 թ-ին՝ 205, 1939 թ-ին՝ 286, 1970 թ-ին՝ 560, 1979 թ-ին՝ 562 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 596 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 111 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (655հա), խոտհարքերը (217հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 66, 73, 382 հեկտար: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Բավրա
Ինդեքս՝ 2802